

**ՀԱՅՆՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ Զ. ԶԱԳՄԱԳՃՅԱՆԻ
ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅՆՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ**

ԼԻԼԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական անբարենպաստ պայմանների պատճառով հայ ժողովրդի տարագիր ղանգվածները դարեր շարունակ ապաստանել են աշխարհի տարբեր անկյուններում: Օտար երկրում իր գոյությունը պահպանելու, տեղի գործարար շրջանների հետ առնչվելու համար անհրաժեշտ էր սովորել տվյալ երկրի լեզուն: Այդ նպատակով հարկավոր էր մտածել երկլեզվյան բառարաններ ու բառացանկեր կազմելու մասին: Այսպես սկիզբ առավ երկլեզվյան բառարանների մի ամբողջ շարք, որի մի պատկառելի մասն են կազմում հայ-անգլերեն բառարանները¹:

Երկլեզվյան բառարանները միաժամանակ բազմաթիվ նոր բառերով ու արտահայտություններով հարստացրել են հայոց լեզվի բառապաշարը: Դրանց մեծ մասը հաջող կազմված բառեր կամ տերմիններ են, որոնք մինչև այսօր էլ գիտության տարբեր ոլորտներում փոխարինում են օտար բառերին: Հ. Չազմազճյանի բառարանի² առաջաբանում ասված է, որ բառարանի անգլերեն բառացանկում մտցված են հազարավոր նոր բառեր (դրանք նշված են աստղանիշով), որոնք բացակայում են նախորդ նույնատիպ բառարաններում և որոնց համար ինքը ստիպված է եղել կերտել հայերեն համարժեքներ: Նոր բառեր կերտելիս Հ. Չազմազճյանը անշուշտ օգտվել է Մ. Քաջունու և Գ. Լուսինյանի Ֆրանսերեն-հայերեն բառարաններից³, զգուշություն ցուցաբերելով դրանց մասնավորապես հայերեն բառապաշարի նկատմամբ: Հայտնի է, որ հաճախ դիտական միջոցով բառը կամ տերմինը ֆրանսերենում կամ անգլերենում այլ նշանակություն ունի, ուստի հայերեն նոր բառեր կազմելիս անհրաժեշտ է տարբերակված նոր մոտեցում ունենալ:

Այժմ համեմատենք մի քանի գլխաբառ Քաջունու, Լուսինյանի և Չազմազճյանի բառարաններից, ցույց տալու համար, որ Չազմազճյանը ձգտել է նորակազմությունների մեջ մեծ մասամբ լինել ինքնուրույն:

Humil գլխաբառը Քաջունին բացատրում է «բուսահողիտ», Լուսինյանը՝ «բուսահողին», իսկ Չազմազճյանը՝ «բուսահողին, գետնաթթու»: Ինչպես տեսնում ենք, Չազմազճյանը օգտագործելով Լուսինյանի բուսանոլին բառը, կերտել է և գետնաթթու տերմինը, որն ավելի հաջող է:

¹ Հայ-անգլերեն բառարանագրության տակ պետք է հասկանալ անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն բոլոր բառարանները:

² Հ. Չ ա զ մ ա ճ յ ա ն, Ը ն դ ա ռ ձ ա կ բ ա ռ ա ռ ա ն անգլերեն-հայերեն, Բոստոն, 1922, էջ Ե—Թ:

³ Մ. Ք ա ջ ու ն ի, Բ ա ռ ա ճ ի ռ ք արվեստից և գիտության և գեղեցիկ դպրության (ֆրանսերեն-հայերեն), հ. 1—2, Վենետիկ, 1892, Գ. Լ ու ս ի ն յ ա ն, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, Պոլիս, հ. 1, 1909, հ. 2, 1910:

Anabrose գլխաբառի դիմաց Քաջունին գրել է «կեղ ի վերին երեսս մարմնոյ», Լուսինյանը՝ «(ախտբ.) կեղ, մակակեղութի. կեղ ի վերին երեսս մարմնոյ»: Նկարագրական այս բացատրություններից Չագմագճյանը ստեղծել է (Anabrosis) մակակեղ բառը, կողքին տալով լրացուցիչ բացատրություն («մարմնոյ երեսի վրայ կեղ») և տեղեկանքային նշումը (բժշկական),

Actinometre գլխաբառը Քաջունու և Լուսինյանի բառարաններում բացատրված է «շողաչափ», Չագմագճյանը (Actinometer) վերջինիս ավելացրել է իր ստեղծած ճանաչողական բառը, որը, սակայն, անհաջող է հատկապես բարեհնչյունության առումով:

Galeopitheque գլխաբառի դիմաց Քաջունին գրել է «կատուակապիկ, կապիկ թուցիկ», Լուսինյանը՝ «կապկապատու, կատուակապիկ», իսկ Չագմագճյանը (Galeopithecus) «թուակապիկ», որն այնքան էլ հաջող չէ:

Ն. Չագմագճյանը Լուսինյանից վերցրած բառերը իր բառարանում տարբերակել է խաչանիշով: Սակայն գրաշարական-տեխնիկական դժվարությունների հետևանքով խաչանիշը դարձել է աստղանիշ և այն թյուր տպավորությունը ստեղծվել, թե, իբր, այս բառերը Չագմագճյանն է կերտել: Ահա մի քանի այդպիսի օրինակ.

Hippeastrum-ը Չագմագճյանի մոտ աստղանիշով է, այսինքն նոր բառ՝ «ծիաստղ» (ամաբիլի տեսակ), մինչդեռ այն հանդիպում է նաև Լուսինյանի մոտ՝ (hippeastre) «ծիաստղ. ազգ շուշանասերից» ձևով:

Bromlilt-ի դիմաց Չագմագճյանը գրել է «բրոմաքար», որն ունի նաև Լուսինյանը «բրոմաքար, ժահաքար» ձևով:

Նորաբանությունների հարցում Չագմագճյանը ղեկավարվել է որոշակի սկզբունքներով: Նա աշխատել է անգլերեն, կամ, այսպես փոխառված, «միջազգային» շատ բառեր հայերենով ներկայացնել, միաժամանակ, սակայն, նշելով, որ ինքը անպատճառ հայերեն համարժեք գտնելու «տենչ» չունի: Չագմագճյանը գտնում է, որ եթե բառը չի թարգմանվում կամ թարգմանելիս անհաջող է ստացվում, ապա նպատակահարմար է ուղղակի եվրոպական լեզվի բառը որդեգրել: Քննվող բառարանի առաջաբանում կարդում ենք. «Մենք չենք կրնար լինական պարիսպ մը քաշել մեր լեզվի շուրջ և եթե քաշենք ալ, հառաջագիմություն սահմանը կփակենք»⁴: Չագմագճյանի կարծիքով «եվրոպական և գեղեցիկ մի բառ եթե մեր լեզվի ոճերուն շնորհ ու ուժգնություն բերե»⁵, պետք է որդեգրել ալդ բառը: Մյուս կողմից՝ հեղինակը նկատում է, որ իմաստ չունի անհարկի օգտագործել օտարադանությունները և աղճատել մեր լեզուն:

Այժմ անդրադառնանք Չագմագճյանի նորակազմ բառերին, դիտարկելով այն ուղիներն ու միջոցները, որոնք կիրառել է հեղինակը դրանք կերտելիս: Բառարանում հանդիպում են ուղղակի փոխառություններ և բառապատճենումներ: Ուղղակի փոխառությունների ժամանակ հեղինակը, փոխ առնելով նոր բառը կամ տեղմինը, տառադարձում է այն նույնությամբ կամ էլ որոշ հնչյունական փոփոխություններով: Այս դեպքում այդ փոփոխությունը հարմարեցվում է հնչյունային որոշակի համակարգի՝ հիմք ընդունելով արևմտահայերենի արտասանական նորմերը:

⁴ Ն. Չագմագճյան, նշվ. աշխ., էջ. Թ:

⁵ Նույն տեղում:

Չագմագճյանը փոխ է առնում այն բառերը և մասնավորապես տերմինները, որոնք հայոց լեզվում չունեն համապատասխան համարժեքներ:

Ինչպես նշում է Ա. Ռեֆորմատսկին⁶, ուղղակի փոխառություն են ենթարկվում առաջին հերթին հատուկ անունները, դրամների, պաշտոնների, հագուստի մասերի, ուտելիքների, խմիչքների անվանումները և այլն, իսկ տեքստի թարգմանության ժամանակ անհրաժեշտաբար պահպանվում է «տեղական կոլորիտը», որը համապատասխանում է Հերդերի իմաստուն ասացվածքին. «Հարկավոր է պահպանել օտար լեզվի առանձնահատկությունները և հարադատ մնալ մայրենի լեզվի նորմերին»⁷:

Այս փոխառություններից մի մասի դիմաց Չագմագճյանը դրել է «տեղական անուն» նշումը և բացատրությունները հաճախ տվել փակագծերի մեջ: Բերենք Չագմագճյանի բառարանում նույնությամբ տառադարձված բառերի և տերմինների մի քանի օրինակ.

Arara—արարա (Ավստրալիայի արմավենի մր):

Guiso—գուիսո (կարծր փայտով ծառ Փիլիպպյան):

Bagara—բագարա (արքայածուկի տեսակ մր):

Bom—բոմ (մեծ օձ մր՝ անունը հանած ձայն են):

Բառերի մի մասն էլ հեղինակը տառադարձել է անգլերեն լեզվի արտասանական կանոնների համաձայն: Այսպես՝ Doon—դուն, Toot—տութ, Jambool—յամբուլ, Boongary—բունգարի:

Անգլերեն բառերի *t*-ն Չագմագճյանը տառադարձել է *տ*-ով: Ինչպես, օրինակ՝ Bafis—բափիս, Tanist—տանիսթ, այստեղ երկրորդ *t*-ն՝ ք է տառադարձված բարեհնչության նպատակով, Biti—բիտի: Հեղինակն այս դեպքում ճիշտ է վարվում, քանի որ *t*-ն ք է հնչվում միայն ուժեղ դիրքում, բացակղբում կամ շեշտված վանկում:

Անգլերենի *p*-ն տառադարձված է *պ*-ով: Այսպես՝ Tarpon—տարպոն (այստեղ նաև *i*-ն՝ տ), Bunyip—բունիպ: Օտար բառերի կրկնակի բաղաձայնները Չագմագճյանը տառադարձում է միայն մեկ ձայնավորով: Օրինակ՝ Willet—վիլետ, Macasse—մակաս, Carrub—կարուբ:

Մի շարք բառեր էլ հայերեն տառադարձելիս Չագմագճյանը որոշ դեպքերում զանց է առել վերջավորությունները: Օրինակ՝ Dressena—դրեսին, Cecropia—կիկրոպ, Pomelo—պոմել:

Հունարենից, իսպաներենից և հնդկերենից փոխառյալ բառերում *ch* կապակցությունը հեղինակը տառադարձում է հայերեն *փ*, հիմնվելով այդ լեզուների արտասանության վրա: Օրինակ՝ Saccharine հունարենի ազդեցությամբ՝ շաքարին: Broncho իսպաներենի ազդեցությամբ՝ բրոնխ, Pachisi, Par-chisi հնդկերենի ազդեցությամբ՝ փաքիսի, իսկ Caleche բառում ֆրանսերենի ազդեցությամբ *ch*-ն կարդացվում է շ (կալաշ):

Մի վերջավորություն ունեցող բառերը Չագմագճյանը տառադարձել է *-ոս* (գրամփոս, լիտմոս): Նման կարգի ուղղակի փոխառությունների դեպքում, հատկապես տերմինների կողքին, հեղինակը մեծ մասամբ փակագծերում տալիս է դրանց բացատրությունը, որը հեշտացնում է բառարանից օգտվողի գործը: Օրինակ՝

⁶ А. Реформатский, Введение в языкознание, М., 1955, стр. 106.

⁷ Նույն տեղում:

Burrawang—բուռավանկ (տեղական անուն. կոնաբեր ծառ Ավստր.):
Calderaro—կալտերարո (իտալական քաղաքական կուսակցության մը անդամ 19-րդ դարու սկիզբը):

Carpybara—կապիբարա, [կենդանաբանական] (խոճկորի նման մեծագույն կրծող մը):

Eboe—եբոյ (ընդաբեր ծառ, որու հունտեն յուղ մը կհանվի):

Gomuli—գոմուտի (պարանի նյարդ մալայան արմավենիէ):

Չագմագճյանի կերտած նոր բառերի մի զգալի մասը բառապատճենման արդյունք է: Բառապատճենումը լեզվի բառային կազմը հարստացնելու արդյունավետ միջոց է: Բառապատճենման դեպքում փոխ է առնվում բառի ձևաբանական կառուցվածքը և ձևույթի բառային իմաստը, թարգմանվելով փոխառու լեզվի համապատասխան ձևույթներով: Չագմագճյանի բառարանում բավական շատ են լրիվ պատճենմամբ ստեղծված նոր բառերն ու տերմինները, որոնք կազմվել են հետևյալ կերպ.

ա) Կազմությամբ բարդ բառերը թարգմանվում են հայերեն բարդ բառի՝ առանձին բաղադրիչների պատճենմամբ: Օրինակ՝ *Axstone*—ax (տապար) + stone (քար) = տապարաքար:

Jugfish—Jug (կուժ) + fish (ձկն) = կժածուկ:

Hexenbesen—Hexe (վհուկ) + besen (ցախ) = վհկացախ:

Devil-fish—Devil (դև) + fish (ձկն) = դևածուկ:

Earthstar—Earth (գետին) + star (աստղ) = գետնաստղ:

բ) Ածանցավոր և բարդ ածանցավոր բառերը թարգմանվում են ըստ նրանց բաղադրիչների: Օրինակ՝

Harmonist—Harmon (դաշն) + ist (բան) = դաշնաբան:

Hydrodynamic—Hydro (ջուր) + dinamo (ուժ) + ic (ական) = ջրուժական:

Decephalization—De (տար) + cephal (գլուխ) + ation (ություն) = տարազլիսություն:

գ) Բառարանում հանդիպում են նաև հակառակ պատճենումներ, երբ սկզբում պատճենվում է բարդ բառերի երկրորդ բաղադրիչը, ապա՝ առաջինը: Օրինակ.

Cephalaspis—*Cephalo* (գլուխ) + *aspidium* (վահան) = վահանազլուխ:

Circumsolar—*Circum* (շուրջ) + *solar* (արևային) = արևաշուրջ:

Cytolymph—*Cyto* (բջջ) + *lymph* (պարզ ջուր) = ջրաբջջ:

Melocactus—*Melo* (սեխ) + *cactus* (կանկատունկ) = կանկասեխ և այլն:

Չագմագճյանը նոր բառեր և տերմիններ ստեղծել է նաև կիսապատճենման միջոցով:

ա) Երբ պատճենվում է բարդ կամ ածանցավոր բառի արմատներից մեկը, իսկ բառի կամ տերմինի մնացած մասը տառադարձվում: Օրինակ՝

Bromanil—ժահնանիլ:

Paperograph—պապերագիր:

Cyprinodont—կիպրինատամ:

Huiabird—հուլահավ:

Boroglyceride—բորաքաղցրիդ:

բ) Երբ պատճենվում է ածանցը կամ վերջավորությունը, իսկ արմատը տառադարձվում է: Օրինակ՝

Baunscheidlism—Baunscheidl (Բաունշալթ)+ism (ություն)=բաունշալթություն (բժ.) (աստղածածուկություն եւ Կոթը գրգռիչ հեղուկով շփում):

Burkism=Burk (Բարկ)+ism (ություն)=բուրկաթյուն (դիակը ծախելու համար ոճիր՝ խեղդամահ ընելով):

Catlinite=Catlin (Կալին)+ite (քար)=Կալինաքար (Կարմիր կավ մը):

Gallize=Gall (գալլ)+ize (ել)=Գալլիկ (ըստ Տք. Գալլի խաղողի հյութին ջուր եւ շաքար ավելցնել գինին շատցնելու համար):

Չափագճյանի ստեղծած նոր բառերի և տերմինների մեջ կան այնպիսիները, որոնք առաջացել են ոչ թե բառի առանձին մասերի, այլ տերմինի կամ բառի ընդհանուր իմաստի թարգմանությամբ: Օրինակ՝ *Anabas* գլխաբառը Գ. Լուսինյանի մոտ թարգմանված է «ձք. Վերակ. ազգ ձկան, որ սողայ ծովեզերք և ելանէ յարմավենիս»: Չափագճյանը ելնելով այս բացատրությունից, ստեղծել է մազլածուկ բառը («ձուկ մը, որ ցամաքի վրա կառաջանա և նույնիսկ ծառերի վրա կրնա մագլցիլ»):

Cisco-ի դիմաց Չափագճյանը գրել է լնտառնիս, որը ստեղծել է այդ բառի ընդհանուր իմաստից:

Babism—դոնականություն (սիրգա Ալի Մուհամեդի հիմնած աղանդը՝ 1843-ին, ամեն կրոնքի խառնուրդ մը) և **Babist**—դոնական, նույնպես ստեղծվել են բառերի ընդհանուր իմաստից:

Չափագճյանի նորակերտ բառերի մեջ մեծ թիվ են կազմում իսկական բարդությունները: Բառաբարդումը նոր բառեր ստեղծելու գործուն միջոցներից մեկն է, որը հնարավորություն է տալիս արտահայտելու նոր հասկացություն և կազմում է հայոց լեզվի բառային կազմի էական մասը:

Չափագճյանի բառարանում շատ են նաև տերմին-բառաբարդումները: Բառաբարդմամբ տերմին կերտելը բացատրվում է նրանով, որ բարդ բառն իր մեջ ունենալով կրճատվածություն և իմաստային հարգեցվածություն, նպաստում է տերմինի ստեղծմանը:

Այժմ տեսնենք, թե ինչ կադապարներով է բառարանագիրը կերտում այդ նոր բառերն ու տերմինները:

1. Գոյական+բայարմատ կապակցություններ, որոնք կազմում են գոյականների՝ գործող անձի կամ գործողի նշանակությամբ: Օրինակ՝ հյութահան⁸ կեռասասեր (248), կացնեքեկ (108), կաղանդագիր (201), որչաքնակ (191), ուր բարդության առաջին մասը դառնում է երկրորդի լրացումը: Չափագճյանի մոտ հանդիպում են նաև գոյական+բայարմատ կադապարով բարդություններ, որոնք կազմում են ածականներ: Օրինակ՝ վարսաքեր (238), հիմնախույս (122), ջերմագայթ (1212), կորիզանջատ (597) և այլն:

2. Բայարմատ+գոյական կադապարով կազմվում են գոյականներ, որտեղ առաջին բաղադրիչը բայական արմատ է և լրացնում է երկրորդի իմաստը՝ արտահայտելով սեռական հոլովի ձևական նշանակություն: Օրինակ՝ ծփագոտի (177), կցանավ (1206), ձգալար (172), ծնախորշ (154), ծնամաշկ (154), ծնարմատ (149), շարժանդ (412), օգնափող (1149) և այլն: Կան

⁸ 2. Չափագճյան, Նշվ. աշխ., էջ 978 (այսուհետև էջերը նշվելու են մեջբերվող բառերին կից):

նաև որոշ գոյականներ, որոնք բարդություններ են կազմում անորոշ դեր-բայ-+գոյական կաղապարով: Օրինակ՝ ապրելավարձ (160), խմելախոտ (952), խոսելավախ (850):

3. Ածական-+գոյական կաղապարով կազմվել են բնարվեստ (1269), թանձրաթեփ (1034), փխրափառ (648), գեղատունկ (335), թխագոտի (544), ոսկեհաղարջ (364), բարձրակամուրջ (178) և այլ գոյականներ, որտեղ երկ-րորդ բաղադրիչը գործածվում է իր հիմնական նշանակությամբ, իսկ առա-ջինը որպես որոշիչ լրացնում է նրան:

Չազմագծյանի մոտ ածական-+գոյական կաղապարով կան և ածականա-կան կիրառություն ունեցող բառեր՝ մի բան ունեցողի նշանակությամբ: Օրի-նակ՝ թունաբյուր (1225), պայծառունկ (267), դալկարյուն (187) և այլն:

4. Ածական-+բայաբան կաղապարով կազմվել են և՛ գոյականներ, և՛ ածականներ՝ գործողի նշանակությամբ: Այսպես՝ խորտակոփ (676), խոնա-վամած (458), փակասեր (271) բառերը հեղինակի մոտ ածականներ են, իսկ դսզնահար (1029), թափանցատիպ (412), կանխաթառամ (514), կարծրեփ (680) բառերն ունեն գոյականական կիրառություն:

Բառարանում այլագաղթ (1228) և լալկանախոս (210) բառերն ունեն թե՛ ածականական և թե՛ գոյականական կիրառություն:

5. Գոյական-+գոյական կաղապարով կազմվել են հիմնականում գոյա-կաններ, որոշ դեպքերում նաև ածականներ, որտեղ բաղադրության առաջին բաղադրիչը լրացնում է երկրորդի իմաստը, արտահայտելով սեռական հո-լովի ձևական նշանակություն: Չազմագծյանի մոտ գոյականներ են ելքերա-մողես (235), իշահավ (273), մրջնահավ (665), մեղրագինի (268), առվույ-տանան (275) և այլն, իսկ գրիտակերպ (653), կոհակահեր (369), հրվան-դակերպ (369), վիտամազ (369) բառերը ածականներ են մի բան ունեցողի նշանակությամբ:

6. Ածական-+ածական կաղապարով բարդությունները բառարանում հազ-վադեպ են: Այս կաղապարով կազմվել են ածականներ, որտեղ բարդության անդամները գտնվում են համադաս կապակցություների մեջ: Օրինակ՝ պաւ-գափակ (679), սրախորտ (671):

Բացի երկբաղադրիչ իսկական բարդություններից, բառարանում հան-դիպում են նաև եռաբաղադրիչ իսկական բարդություններ, որոնք կազմում են գոյականներ և հայոց լեզվում այնքան էլ կենսունակ չեն: Օրինակ՝ արգան-դափողատապ (288), բջջագունաչափ (257), սեռանոթակիր (614), սրտագար-կագիր (217) և այլն:

Չազմագծյանի բառարանում ստվար խումբ են կազմում ածանցավոր և բարդ ածանցավոր նորակերտումները: Կան նախաածանցավոր, վերջածանցա-վոր և նախածանց-վերջածանցավոր նորակերտումներ: Վերջին տեսակին առանձին չենք անդրադառնում, քանի որ դրանց կհանդիպենք կամ նախա-ծանցավոր, կամ էլ վերջածանցավոր նորակերտումները քննելիս:

Բառարանում զգալի թիվ են կազմում ան և ապ ժխտական նախածանց-ներով նորակերտումները: Ան նախածանցով կազմվածներն են անցինձ (962), անսերմնակալ (96), անմտարվեստ (1005), անընթերցություն (467) և այլն: Ապ նախածանցով կան ապանձնավորել (398), ապաջրածնել (389), ապօծել (423), ապունակել (423), ապասնունդ (397) և այլն: Համ նախա-ծանցով հանդիպում են համապատարագ (301), համագիություն (715), հա-

մանում (304), համադարձ (717), համաբար (715) և այլ նոր բառերը, որտեղ համ նախածանցն ունի միևնույն, համայն, ընդհանուր, ամբողջ նշանակությունը:

Բառարանում կան նաև հունարան դպրոցի ստեղծած ածանցներով կազմված նորաբանություններ: Այսպես՝

Մակ նախածանցով (որն ունի վրա նշանակությունը) բառարանում կան մակածնի (1023), մակուլուր (1024), մակակեղ (50), մակահություն (735) և այլ նորակերտություններ:

Հակ նախածանցով ունենք հակաբաշխ (273), հակագործել (338), հակագործություն (338), հականց (354), հակախոտ (322), հակափոխ (353) նոր բառերը, որ հակ ածանցը կազմված է հունարենի նմանությամբ, հայերենի հակառակ, հակել բառերից:

Հար նախածանցով, որն ունի կից, մոտ, հետը, միասին նշանակությունը և առաջացել է գրաբարյան հարել (յարել) բայից, Չագմագճյանի մոտ հանդիպում են հարալծակ (1201), հարալուսին (1030), հարակազմություն (295), հարանյութ (281), հարագայթ (845) և այլ նորակերտումներ:

Ենթ նախածանցով բառարանում կան ենթախնամություն (1077), ենթակենսություն (52), ենթամատուց (122), ենթացամբոց (1246), ենթագոյություն (1186) և այլ նոր բառեր, որտեղ ենթ ածանցն ունի տակ, ցած նշանակությունները և առաջացել է ընդ նախդիրի հնչյունափոխությամբ:

Վեր ածանցով, որն ունի վեր, վերև, նորից, վերտին իմաստները, հանդիպում են վերահակ (621), վերաբյուրել (333), վերակուր (621), վերափակույթ (1023), վերակալանել (1104) և այլ բառեր:

Տար ածանցով կան տարաբեղմ (699), տարազվածություն (382), տարակամություն (735), տարանդություն (736), տարանյութ (833), տարախառություն (833) և ուրիշ նորաբանություններ, որտեղ ածանցն ունի տարբեր իմաստ:

Ներ ածանցով, որ առաջացել է գրաբարյան ներքոյ բառի արմատից և հնչյունի անջատմամբ, բառարանում կան ներանցություն (1042), ներփոդարկություն (806), ներհարություն (1011), ներհարել (1011), ներհեղարկություն (804), ներմղություն (1019) և այլ նորակերտ բառեր:

Փոխ ածանցը փոխել, փոխանակ, փոխարինել բառերի արմատն է: Այս ածանցով բառարանում կան փոխադառնալ (99), փոխադասություն (492), փոխազանգություն (951), փոխածայրություն (1023), փոխակարգություն (42) և այլ նորաբանություններ:

Արտ ածանցով ունենք արտաբերական (486), արտակալ (736), արտապա (321), արտասահ (1046) և այլ նորակազմությունները, որ արտ ածանցը առաջացել է արտաքս, արտաքին բառերից:

Գեր ածանցով, որն ունի վեհ, բարձր նշանակությունները, բառարանում կան միայն եզակի բառեր: Օրինակ՝ գերահալ (523), գերաշրջություն (736), գերաջննել (1190), գերահալ (522):

Չագմագճյանի բառարանում մեծ թիվ են կազմում վերջածանցավոր նորակերտումները: Եթե նախածանցավոր բառերում հիմնականում գերիշխում են հաջող նորակերտումները, ապա վերջածանցավոր նորակազմությունների որոշ մասն արհեստական է և բարբառային:

Ական վերջածանցով, որն ունի մի բանի հատուկ, մի բանի վերաբերյալ իմաստը, կամ էլ ցույց է տալիս առարկայի կախումը, ելակետը, բառարանում հանդիպում են կիտիլական (238), բորակածիթական (109), ետաշնչական (951), օրհնական (136) ածականներին, իսկ ձայնահեգական (1045), դոնական (110), լիական (1053) բառերն ունեն գոյականական կիրառություն:

Ային վերջածանցով ունենք երկառանցային (234), լսալարային (255), ծնամաշկային (154), մագլածկային (50), հապաղութային (980) և այլ նորակերտություններ, ուր ային ածանցը կազմում է ածականներ, արտահայտությունով որևէ հարաբերություն, վերաբերություն, ածականի նյութական իմաստն արտահայտող գոյականի վերաբերյալ, կամ էլ՝ մի բան պարունակելը:

Ավուր վերջածանցով կազմված են ածականներ, մի բան յունեցողի, կրողի, կատարողի նշանակությամբ: Օրինակ՝ երկծախկավուր (144), խեղանամուր (171), խորտավուր (653) և այլն:

Արան ածանցով, որ անուններից, բայարմատներից կազմում է տեղի իմաստ արտահայտող գոյականներ, Չազմազճյանի բառարանում կան պաղարան (250), ուտելարան (1094), ձաղարան (1048), ունելարան (724) և այլն:

Ոց ածանցը դրվելով անունների վրա, կազմում է տեղի որևէ գործիքի գործողության անուններ: Օրինակ՝ ձաղաց (1048), շարոց (1083), պաղոց (1096), տողոց (1046) և այլն:

Անոց ածանցը անուններից կազմում է տեղի գաղափար արտահայտող գոյականներ: Օրինակ՝ ծոռանոց (1149), կեռանոց (614) և այլն:

Ություն ածանցով, որ սովորաբար անուններից, բայարմատներից և բայահիմքերից կազմում է վերացական անուններ, ցույց տալով այս կամ այն հատկանիշը, ունենք հեռակրություն (1204), հյուլեաշարժություն (97), շաղականություն (410), վկայադրություն (399), հեռագգացություն (1204) և այլ նորակերտություններ:

Իշ ածանցով Չազմազճյանը կազմել է գոյականներ, մեծ մասամբ գործիքի և գործողի նշանակությամբ: Օրինակ՝ կոկիշ (1217), հեղիշ (418), նոսրիշ (418), ցալարկիշ (1095), աղկազմիշ (122), տաբրակազմիշ (298), ոսկեփոռիշ (416) և այլն:

Ակ ածանցով կազմված բառերից, որոնք ունեն գործիքի կամ գործող անձի և նվազական նշանակություն, ունենք ակծունակ (1206), բացակ (1262), գանկանմլակ (345), եղեբգակ (1109), հեռաղաշնակ (1204), երթակ (643), սեղմակ (345) և այլն:

Իկ ածանցը բացի փաղաբշական-նվազական իմաստից, ունի նաև բառակազմական նշանակություն: Օրինակ՝ այլաթևիկ (209), օղակենսիկ (23), ծառատամնիկ (395), կոբվզիկ (906), հողիկ (87) և այլն:

Ուկ ածանցով, որ անուններից, բայարմատներից և բայահիմքերից կազմում է գոյականներ, կան լսուկ (101), խոտորուկ (180) և այլ բառեր, որոնք բարբառային կիրառություն ունեն:

Ենի ածանցով կազմված նորակերտումները Չազմազճյանի բառարանում ունեն ծառի, բույսի իմաստ: Օրինակ՝ ալբենի (723), հմայենի (746), կաբագենի (611), երիղենի (670), մանշենի (809), հակենի (674) և այլն:

Ի ածանցով ունենք երկցալի (418), ցլագեղծի (188) և այլ բառեր, որոնք

ունեն գոյականական կիրառություն, ցույց տալով սերում, որևէ հատկությամբ օժտված լինելը կամ էլ արտահայտում են բույսի իմաստ:

Յա ածանցով բառարանում կան զմշեմ (186), վեցարժյա (704), օֆիցրածնյա (1024), երկսանտրյա (148) ածականներ՝ մի բան ունեցողի նշանակությամբ:

Ածո վերջածանցով, որ հիմնականում կազմում է ածականներ, Չազմազճյանի մոտ միայն հատկածո (650) բառն է, որ ունի թե՛ գոյականական և թե՛ ածականական կիրառություն: Խաբածո (1128) և ձևածո (1034)՝ բառերը զործածվում են գոյականաբար:

Ույր վերջածանցով բառարանում կան կոյսւյթ (1139), ցնծույթ (246), ֆաղկեհույթ (1047), ֆաշույթ (1061) և այլն նորակերտությունները, որ այս ածանցը ություն բարդ ածանցի առաջին բաղադրամասն է, որը անուններից, բայարմատներից և բայահիմքերից կազմում է գոյականներ:

Ուն ածանցով բառարանում կան կտղուն (1118), փղձկուն (932) ածականներ:

Ան ածանցն ունի և՛ ածականական և՛ գոյականական կիրառություն, սակայն բառարանում բերված բառերը զործածված են որպես գոյական, ցույց տալով գործող անձ կամ գործիք, օրինակ՝ նշան (166), փշախվսն (234), ֆեղեհեծան (1176) և այլն:

Արդ ածանցով, որն ունի ձև, կերպ նշանակությունները, Չազմազճյանը ստեղծել է ոսկիարդ (1018), պրիսմարդ (1068) բառերը:

Ութ, չեֆ, կեկ վերջածանցները, որոնք բարբառային ծագում ունեն և գրական հայերենում այլևս բառակազմական արժեք չունեն, հանդիպում են հետևյալ բառերում՝ զիլկեկ (1144), հեղկեկ (418), ձևառութ (982), տարուղակչեֆ (1222) և այլն:

Այսպիսով, Չազմազճյանը կերտել է շուրջ 3000 նոր բառ ու տերմին: Նրա կերտած բազմաթիվ բառեր ու տերմիններ ընդունելի են, քանի որ դրանք լիովին համապատասխանում են հայոց լեզվի բառակազմական կաղապարներին: Բառարանում կան նաև անհաջող նորակերտություններ: Օրինակ՝ վրանդոֆ (206), տարաբկական (833), անբնականություն (1005), անառնուզակերպ (254), բացակյաց (1168), դուկ (1214), ընդարկ (1246), քիֆարկու (1216) և այլ բառեր, որոնք կամ արհեստական են, կամ բարբառային, կամ էլ նրանց բառիմաստը չի բացահայտված: Սակայն այդ անհաջող նորակերտությունները չեն նսեմացնում Չազմազճյանի կատարած օգտաշատ գործը:

Համեմատելով Չազմազճյանի բառարանը Գույումջյանի անգլերեն-հայերեն⁹ բառարանի հետ, պարզվեց, որ Գույումջյանը զգալի չափով օգտվել է Չազմազճյանի նորակերտություններից, մի փաստ, որն ապացուցում է վերջինիս, որպես բառարանագրի նորարար ազդեցությունը մյուս բառարանագրերի վրա:

Գույումջյանը Չազմազճյանից վերցրել է ֆոստ (653), կորիզացանց (845), ցլօձ (188), հակենի (674), ալեկալ (1105), թխադափ (544), ցուցազիծ (653), դասաֆար (1203), մարսին (1237) և շատ այլ բառեր:

9 Ն. Գույումջյան, Ընդարձակ բառարան անգլերեն-հայերեն, Կահիրե, 1961:

Չափազանի բառարանի արժանիքներից մեկն էլ նրանում եղած նոր տերմինների առատությունն է։ Այդ տերմինները հեղինակը բերել է համապատասխան նշումներով՝ դասակարգելով դրանք ըստ հետևյալ բնագավառների.

ա) Բժշկական — խմբաներթյուն (652), ցլաֆաղց (187), տարակամություն (735), տարհիշություն (473), խոսելավախ (850), մամացապսուկություն (260) և այլն։

բ) Հանքաբանական — քաղաքաբար (352), վոփրակավ (837), հատաբար (376), խցաբար (984), թխադոտի (544),

դ) Բուսաբանական — կայենեի (836), հմայենի (746), վուտսենի (1288), վոդատունկ (101), փղականջ (483), փղսուն (723), գորտավուշ (1083), ժայռապտեր (1288) և այլն։

դ) Քիմիական (տարրաբանական) — հնդկաթխին (772), հնդկադեղին (772), լեղակոլ (774), տառեխին (276), ֆրֆմուց (352), հնդկոլ (774), հընդկոլին (775), աճառետին (254) և այլն։

ե) Ձկնաբանական — գետագայլ (346), գիսատամ (238), քանձրաթևի (1034), քելալոդակ (919), լայնալեզու (448), խոկաթև (174), ձվասպառ (1164) և այլն։

զ) Թռչնաբանական — գորտբերան (600), դեղնալանջ (245), ֆառակոչ (1173), ֆարձեծուկ (1178), տնասարեկ (724), տղմակեր (162), խայտատորդիկ (659) և այլն։

է) Ճարտարապետական — ուրվագարդ (1226), արտակիր (473), խրձապլուն (276), ծխենդրվագ (251), հարթամաս (946), ձվադրվագ (1024), ալեդրվագ (369) և այլն։

ը) Մեքենագիտական — ֆարշագոդ (454), նարալծակ (1201), քանձոդ (354), փողահոդ (1003), հարդահատ (238), իշակ (546) և այլն։

Բացի հիշյալներից, բառարանը հարուստ է կենսաբանական, կենդանաբանական, բնագիտական, էլեկտրական, երաժշտական, փիլիսոփայական և այլ տերմիններով։

НОВЫЕ АРМЯНСКИЕ СЛОВА В АНГЛО-АРМЯНСКОМ СЛОВАРЕ А. ЧАКМАКЧЯНА

ЛИЛИК ВАРТАНЯН

Резюме

В ряду всех армяно-английских и англо-армянских словарей словарь Чакмакчяна выделяется более строгими научными принципами составления и богатством лексики. Автором словаря составлено около 3000 новых слов и терминов, относящихся к различным областям науки и техники. В статье подробно рассматриваются эти новообразования, производится их классификация с точки зрения словообразования, семантической соотнесенности и категориальной принадлежности.